# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

10.01.2018թ.-ին Շահումյան համայնքում տեղի ունեցավ հանրային լսում , որը նախագահում էր համայնքի ղեկավար Ս.Բաբայանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Շ.Գրիգորյանը;

Մասնակցում էին ավագանու անդամներ , համայնքի ղեկավարի աշխատակազմը, բուժ.ամբուլատորիայի, մանկապարտեզի, դպրոցի տնօրեններն ու աշխատակիցները,համայնքի բնակիչներ.

Լ Ս Ե Ց Ի Ն - Արարատի մարզի Շահումյան համայնքի ղեկավար Ս.Բաբայանի հաշվետվությունը 2017 թվականի 4-րդ եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ;

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ, որ Համայնքապետարանը բնակիչներից ստացել է 127 դիմում, համայնքապետի մոտ ընդունելության են եկել 312 քաղաքացիներ ՝հիմնականում սոցիալական,կենցաղային բնույթի հարցերով,ինչպես նաև եղել են ամենօրյա բանավոր հարցումներ. որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի , համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ ու տրվել են համապատասխան լուծումներ:

Համայնքապետարանը բնակիչներին տվել է 795 տեղեկանքներ, ստացել 85 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

2017թ 4-րդ եռամսյակի ընթացքում Շահումյան համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- կազմակերպվել են համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրում են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհների հարակից տարածքները,փողոցները,գյուղի ողջ շրջապատը;

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման, սահմանների ճշտգրման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ, տրվել են ճարտարապետահատակագծային առաջադրանքներ ,շին թույլտվություններ,

2017 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտներն ըստ հետևյալ հարկատեսակների կազմել է՝

- ա/ հողի հարկ 9924 .3 հազար դրամ
- բ/ գույքահարկ 5016.3 հազար դրամ
- գ/ տեղական տուրք – 437.0 հազար դրամ
- դ/ վարձ.հողերից գանձվ.վարձավճ.- 1162.5 հազար դրամ
- հողի օտարումից մուտքեր -հազ դրամ

2017 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում համայնքի բյուջեի ծախսերի կատարողականը կազմել է՝

- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 1925.0 հազար դրամի ֆինանսական աջակցություն,
- աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է՝ 560.0 հազար դրամ
- թաղման ծախս՝870.0 հազար դրամ
- Արվեստի դպրոցին -2770.0 հազար դրամ
- Մանկապարտեզին - 4900,0 հազար դրամ

*Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-կոնդեսական միջոցառումներ՝*

-ուսուցչի օրվա առթիվ-270.0 հազար դրամ

-նոր տարվա միջոցառման և նվերների համար-550.0 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԲԱՅԱՆ